



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1895

ԹԻԻ 4

ՇՈՒՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺ

Ծուլութիւնը ոճիւր է: Հին Եգիպտացիք “Ս.յո” կը պատասխանէին այս հարցման, և մահուամբ կը պատժէին այնպիսին որ քննուելէ ետքը կը հասկցուէր թէ չունի արհեստ կամ պաշտօն: Ծուլութեան համար է որ երեք ծանրաբարոյ դատաւորները դատապարտած են պատկերին մէջ տեսնուած մարդը զոր ոստիկանները մէկդի կը տանին: 3,000 տարի առաջ ապրող Եգիպտացիք կ’ըսէին թէ մարդ կրնայ ընտրել որ և իցէ դորձ, և իրենց մէջ պաշտօնապէս դորձ ճանչցուած էր նաև զողութիւնը: Կ’ըսէին թէ ամէն մարդ պարտի ընել բան մը, և ապրելու անյարմար կը դատէին այն անձը որ բան մը չէր ընէր: Հին Յունաստանի Սպարտա նահանգին մէջ նոյն կանոնը կը տիրէր: Ծոյլերուն հետ այնպէս կը վարուէին հոն ինչպէս մեղուները կը վարուին իրենց փեթակին մէջ գտնուող անգործ մեղուներուն հետ, զորս դուրս հանելով կը խեղդեն: Անոնք ինչո՞ւ համար տեսն մեղրէն զոր հաւաքելու գործին օգնած չեն: Հռոմայեցիք և նախնի Գերմանացիք ասոր նման օրէնք մը ունէին: Աղքատութիւնը ոճիւր չէին համարել, բայց ունակութեամբ ծուլութիւն ընողը մահով կը պատժէին: Այն մեծ խրատութիւնը որ առաջ կը տեսնուէր ծնողաց, ուսուցիչներու և կառավարիչներու վրայ, վերցած է հիմա այսպիսի աւելի լուսաւորեալ օրերու մէջ և անոր յաջորդած է մեղմութիւն: Եւ ասկայն կը կարծենք թէ Եգիպտացիք ծուլութիւնը ոճիւր համարելու իրաւունք ունէին: Առողջ մարդ մը որ կրնայ պահել իր կինը և զաւակները, բայց



ՇՈՒՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺ

զանոնք անօթի կը թողու կամ ուրիշներու օգնութեան կը սպասէ, պատժի արժանի է: Բրիտոսի խօսած առակին մէջ այն մէկ տաղանդ ստացող ծառան պատժուեցաւ իր ծուլութեան համար: Ծուլութիւնը իրաւ գէշ և վնասակար բան է, և ինչ որ նկատենք

զայն, ոճիւր կամ մտաւոր հիւանդութիւն, պէտք է որ զդուշանանք անկէ:

ԻՐ ԵՐԿԻՐԸ ՍԻՐՈՂ ԱՂԱՒՆԻՆ

Շատ դէպքեր կը պատմուին զոյցներու համար թէ ի՞նչ յիշողութիւն ունին թղթատար աղանձները որ

երբեք չեն մոռնար իրենց նախկին բոյնը: Հաւանականապէս այդ դէպքերուն ամենէն նշանաւորն է փարիզու պաշարման միջոցին լուրեր տանելու դործածուող աղանիներէն մէկուն վրայ պատմուածը: Այս թուշուները որ փարիզի մէջ ընտանեցած էին, օդապարիկով դուրս կը հանուէ-

թին/թոյի պղնձի հանքերն ի Սպանիա: Դարատափներ (Բէրայ) տալուած են ապառաժուտ լեռան կողին վրայ, և անոնցմէ հորիզոնական փապուղիներ կ'երթան մինչև հանքին երակները: Խոշոր փապուղիներուն մէջ վայրաշարժներ կը մտնեն իրենց ետև կառքերով որոնք պիտի լեցուին հանածոյով: Այս փապուղիներուն եր-

և ահա, քանի մը երկվայրկենի լուծե- նէն ետքը, պայթման ձայները կը լսուին արագ յաջորդութեամբ: Երբեմն հե- ուիէն ալ կը լսուի պայթման ձայն, որմէ կ'իմացուի թէ ուրիշ փապուղիներու մէջ ալ պայթում պատահած է: Այսպէս լեռան կողը կամաց կամաց մեղրաբջիջի կերպարանք կ'առնէ:


ին, և դուրսը նամակներով և թուղթերով բեռնաւորուելէ ետև, կ'արձակուէին և նորէն ետ կը դառնային փարիզ իրենց բոյները:

Օր մը այս օդապարիկներուն տարած աղանիներէն մէկը քաղաքը պաշարող Գերմանացի զինուորներէն մէկուն ձեռքն անցաւ: Զինուորը զայն սուաւ իր մեծին և սա ալ ընծայեց իր հրամանատարին, Ֆրէտէրիք Քարլ իշխանին: Այս իշխանը աղանիին Գերմանիա նուէր զրկեց իր մօր որ մասնաւոր սէր ունէր աղանիներու վրայ: Իշխանուհին ուրախութեամբ ընդունեց այս նուէրը, աղանիին դրաւ մեծ աղանոցի (վանդակ) մը մէջ, ուր թուշուներ առատօրէն կը վայելէր իրեն ամենէն սիրելի ուտեստները, բայց անկէ չէր կրնար դուրս ելլել:

Այս տեղ ըման չորս տարի բնակեցաւ այս Գաղղիացի աղանիին բաւական երջանիկ, բայց չմոռցաւ իր նախկին բոյնը: Օր մը երբ մեծ աղանոցին դուռը անհողութեամբ մը բաց թողուած էր, Աղանիին թուաւ անկէ դուրս, և այնուհետև ալ չերևաց իր Գերմանացի հիւրընկալներուն: Բայց տասն օր ետքը թեքը կը դարնէր իր նախկին բոյնին դուռներուն, փարիզի մէջ, Պուրլար տը Գլիշի փողոցը: Նախկին պահապանը ճանչցաւ աղանիին և ընդունեց զայն ինչպէս կ'ընդունուի երկար ժամանակ բացակայ մնալէ ետքը տուն դարձող մը:

ՍՊԱՆԻՈՅ ՀԱՆՔԵՐԸ

Անցեալ ամառան թիւին մէջ գրինք պատկերն հանքի մը ուր կը մտնուի գաղաթնահայեաց հորէ մը: Հոս դուռած պատկերը կը ներկայացնէ Ռիօ



ՍՊԱՆԻՈՅ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՋ

կու կողմերէն ծիւղ փապուղիներ կ'երկրնան, որոնց մէջ կը լսուին ձայներն երկաթ մուրճերուն որոցմով կիսամերկ հանքադորներ կը մխեն սրածայր երկաթ գաւազաններ և ծակեր կը բանան: Երբ բացուած ծակերը բաւական խորունկնան, վառօդ կը դրուի անոնց մէջ, և ազդարարութեան ազդակ մը կը հանուի, իսկոյն հանքերուն կանթեղները կը վերցուին, և գործաւորները կը վախճին փապուղիներէն:

կարծ սահելով ինկաւ պառկեցաւ գետին, և ոտքերէն մէկը ներքեւ մընաց: Բարձրաձայն ծիծաղ մը փրթաւ իյնալուն վրայ: Գէորդ իր դեղնած և ցաւէն ծամածուած երեսին վրայ տկար ժպիտով մը ջանք մը ըրաւ ելլելու, բայց նորէն ինկաւ ցած հեծութիւն մը հանելով: Տղաքը երբ այս վիճակին մէջ տեսան զնա, սոսկացին

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՏԱԿ ՄԸ

“Տղաք, եկէք քիչ մը կատակ ընենք,” ըսաւ տղայ մը դպրոցին մէջ: “Շատ աղէկ, ինչ կատակ,” ըսին խումբ մը տղաք անձկութեամբ, և իրարու քով մտեցան որպէս զի խորհրդակցութեան ատեն իրենց ձայնը չլսեն միւս աշակերտակիցները:

Գպրոցին մէջ չափահաս և բարեբարոյ տղայ մը կար Գէորդ անունով: Տղաք անոր հետ չատ կ'իյնային իր կարմիր մազերուն, այլանդակ կերպարանքին, լայն բերանին և մաշած ու պատուած հանգերձներուն համար: Այնպէս սովորած էին նեղել զնա և նա այնպէս հեղութեամբ կը համբերէր տրուած ամէն ներդութեան, որ կարծես չէր գտնուեր անոնց մէջ մէկը որ մտածէր թէ այն ալ ունէր զգացումներ որ կրնային վիրաւորուիլ անոր ցուցուած արմարդութեան առջև:

Այդ իրիկունը Գէորդ կը դառնար դրացիի մը տունէն ուր քանի մը դործեր ըրած էր, և ահա յան-

իրենց կատակին այս հեռուանքին վրայ և վաղեցին անոր օգնելու: Անոնց մէ մին կտրեց զօրաւոր չուանը որ պրկուած էր փողոցին մէկ կողմէն միւսը, գետնէն մէկ ոտքի չափ բարձր, և ուրիշներ ջանացին օգնել ոտքը շարկելու:

«Տղաք, կը վախնամ թէ ոտքս կոտրեցաւ, չեմ կրնար կանգնիլ», ըսաւ Գէորգ և հեծուծիւն մը թռաւ անոր շրթունքներէն հակառակ իր զգացած ցաւը ծածկելու ջանքերուն: Մաստիկ կը ցուլիմ, Գէորգ», ըսաւ Յակոբ անկեղծութեամբ, երբ մնասուած տղան նորէն գետնին պառկեցուցին: «Բոլոր յանցանքն իմն է, վասն զի ես խրատ տուի տղոցը, բայց լոկ կատակի համար: Ես երբեք քեզ մնասելու միտք չունէի, դուն ալ դիտես, այնպէս չէ»: «Այո», ըսաւ Գէորգ. տկար ձայնով, բայց հաղիւ հանեց բառերը շրթունքներէն, ահա նուազեցաւ զգացած ցաւէն որուն կը ջանար դիմադրել քաջութեամբ:

Տղաքը զանիկա տուն տարին, մեծ զգուշութիւնով, և մինչ մէկը դնաց բժիշկ կանչելու, միւսները կ'օգնէին մօրը զնա անկողին դնելու համար: Ժամանակը շատ երկար կը թուէր տղոցը, որ փողոցի դրան քով կը սպասէին մինչև որ բժիշկը դուրս եկաւ Գէորգին քովէն:

«Է, տղաք», ըսաւ բժիշկը քաղցրութեամբ երբ տղոցմէն մէկը առջևն ելաւ: «Գէորգ. ի՞նչպէս է», հարցուց Յակոբ անձկութիւնով: «Յաւով կ'ըսեմ թէ ոտքը կոտրած է, և բաւական ատեն պիտի չկրնայ նորէն քալել», պատասխանեց բժիշկը: «Ինձի չուղեց ըսել թէ ի՞նչ էր իյնալուն պատճառը. բայց եթէ կատակի մը զոհ գացած է նա, կարծեմ մի միայն փոխարէնը զոր կատակ ընողները կըրնան հատուցանել անոր՝ իր միտքը հանդարտեցնելն է գործը ձգելու պարտաւորուած ըլլալուն համար զգացած անձկութենէն»:

Տղաքը տունէն ներս սարդեցան նորէն, Գէորգի մօրը ըսելու համար թէ արդեօք Գէորգի ցերեկուան դործերը չե՞ն կրնար ընել մինչև որ նա աղէկնայ: Գիտէին թէ Գէորգ դպրոցին մէջ կառավարչի պաշտօն մը ունէր. բայց մայրը ըսաւ անոնց թէ ասկէ զատ նա նամէն առտու և իրկուն դործ կը գործէր դրացիներէն մէկուն տունը, և այս միջոցով իր շահած քիչ մը ստակը մեծ օգնութիւն կ'ըլլար իրենց:

«Ըսէք Գէորգին թէ մենք իր տեղը պիտի ընենք իր գործերը», ըսաւ Յակոբ, ուրախանալով որ իրենք կրնային կերպով մը փոխարինել տղին որուն այնչափ մնաս տուած էին իրենց կատակովը. և թէպէտ այս խոստումն ընելով պիտի պարտաւորուէին շատ օրեր շարունակ աշխատիլ դժուար գործով, երբեք զանց չըրին իրենց խոստումը կատարել: Տղաքը իրենց սրտին մէջ նոր յարգանք մը ունեցան դէպի այն տղան որ կրնար իր դիրքը պահել դասին մէջ և որ սակայն կարող էր աշխատիլ այնչափ քաջութեամբ. ուստի այն միջոցին երբ նա կը չարչարուէր ցաւով և բանտարկուած կը

տակը շատ սուղի նստաւ, և երբ կատակ ընել կ'ուզուի, աղէկ է առաջուց լաւ հաշուել և տեսնել թէ կ'արժէ՞ ընել կատակը»:

Գործնական կատակի այս դասը խեղճ Գէորգին ցաւ քաշելու և միւս տղոց ալ շատ ժամեր դժուարին աշխատութեան պատճառ եղաւ, բայց անոնք դաս մը սորվեցան զոր շուտ պիտի չմոռնային, և թէպէտ անոնք ուրիշ տղոց պէս շատ կը սիրէին խաղեր և կատակներ ընել, անկէ ետեւ այլ ևս երբեք չխորհեցան մէկու մը չարիք ընել որ կրնար ծանրակշիւ հետեանքներ ունենալ:

ՈՒՄՊԵՐԹՕ ԹԱԳԱՒՈՐԸ

Ումպերթօ թագաւորը միացեալ իտալիոյ երկրորդ վեհապետն է և իր հօր, Վիլհելմ Էմանուելի, յաջորդեց 1878ին: Ծնաւ 1844ին և ամուսնացաւ 1869ին իր հօրեղբոր, Ճենուվայի դուքսին, միակ աղջկան Մարկարիթայի հետ: Անոնց միակ զաւակն է Նափոլիի Իշխանը որ ծնած է 1869ին: Ումպերթօ թագաւոր ինքզինք սիրելի ըրած է հպատակներուն՝ անոնց բարօրութեան համար իր հոգածութեամբը, և իր յօժարամիտ կարեկցութեամբը զոր ցուցած է աղէտներու ժամանակ, ինչպէս հնտախտի համաճարակին ատենը որ պատահեցաւ Նափոլիի մէջ քանի մը տարի առաջ: Իր իշխանութեան կը հպատակին աւելի քան 30,000,000 ժողովուրդ:



ԻՏԱԼԻՈՅ ՈՒՄՊԵՐԹՕ ԹԱԳԱՒՈՐԸ

մնար տանը մէջ, անոր ցուցին սիրոյ և համակրութեան շատ նշաններ: Ընդհանուր ցնծութիւն եղաւ երբ օր մը Գէորգ նորէն երեցաւ դպրոցին մէջ և գրաւեց առջի տեղը:

«Այդ պիտի կատակներ պիտի չընեմ», ըսաւ Յակոբ: «Այո բանը շատ սուղի նստաւ, և ես իմ կողմէս կ'ըսեմ թէ այլ ևս երբեք պիտի չընեմ ատանկ բան այսուհետև: Դուն վեհանձն մէկն ես, Գէորգ, վրէժխնդրութիւն չկայ մէջդ այնչափ մնասուելից ետեւ անգամ»:

Ժպիտ մը փայլեցաւ Գէորգի անկեղծ դէմքին վրայ: «Չէ, ես չեմ կրնար վրէժխնդրութիւն ընել ձեզի», ըսաւ, «վասն զի կ'ընդունիմ թէ հիմա ամէնքդ ալ ինձ բարեկամ էք. բայց կը միտաբանիմ ձեզի հետ թէ այդ կա-

իրեն երկար ժամանակ ծառայող նախարարապետներն եղած են Բայրոլի, Տէփրէթիս և Բրիտի: Ասոնց մէջէն առաջին երկուքը մեռած են, և երրորդը հիմա կը գտնուի կառավարութեան գլուխը:

ՇՔԵՂ ՀԱՆԴԵՐՁԻ ԱՐԺԱՆԻ

Անգամ մը մարդ մը մինչ փողոցին մէջ կը քայլեր շքեղ հանդերձներով հագուած աղջկան մը ետեւէն, մտածեց, «Արդեօք սա աղջիկը իր մարմինը զարդարելու խնամքին կէսին չափ խնամք կը տանի՞ իր սիրտը զարդարելու համար»:

Այս միջոցին աղքատիկ ծերունի մը ճամբէն վեր կ'ելլէր ծանրաբեռնեալ սայլակ մը քաշելով: Աղջկան քով չհասած երկու անգամ ջանք ըրաւ

մանեւ փոքրիկ տան մը բակը, բայց փողոցի դուռը ծանր էր և նորէն ետ կը դառնար ծերունիին անկէ անցնելէն առաջ: «Կեցիր», ըսաւ դեռատի աղջիկը, թեթեւ մը առաջ ցատկելով, «ես դուռը կը բռնեմ»: Ըրաւ այնպէս, և ծերունին շնորհակալ եղաւ զուարթ ժպտալով: «Այս աղջիկը արժանի է եղբոր գեղեցիկ հանդերձներ հագնելու», խորհեցաւ միւս մարդը, «վասն զի գեղեցիկ հոգի ունի»:

ԿԱՏՈՒՆ ՎԿԱՅ՝ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒՐ

Մէծըր անունով ազնիւ Նիւֆա ունակէնտի շուն մը իր տիրոջ տունէն մոլորելով անյայտ եղաւ, և ուրիշ մարդ մը գտնելով առաւ զայն, ըսելով թէ իր կորսնցուցած շունն է: Փաստեր և համոզման ջանքեր պարտաւ ելլելով դատարանի դիմում եղաւ Մէծըրը նորէն ձեռք բերելու համար, կանոնաւոր դատաւարութիւն տեղի ունեցաւ Ծնունդի մօտերը դատարարի մը և երդուեալ դատաւորներու առջև:


Վկաներէն մէկը ըսաւ թէ կենդանին Մէծըրն է, ուրիշ վկայ մը ըսաւ, «Ոչ, Մէծըրը չէ»: Նոյն ժամանակ շունը կ'երթար երկու ոտիսներուն քով ալ, բոլորովին անտարբեր թէ ի վերջոյ որունը պիտի ըլլար ինք: Շաբաթ մը տեւեցին այս իրարու հակառակ վկայութիւնները, և ո՛չ դատաւորը և ո՛չ երդուեալ դատաւորները կարող եղան հասկնալ բանին ստուգութիւնը որպէս զի կարենային վճիռ մը տալ:

Այս միջոցին Մէծըրին տիրոջը տան մէջ բնակող կին մը ըսաւ թէ իր կատուն կրնար լուծել խնդիրը, վասն զի կատուն և Մէծըրը իրարու հետ շատ բարեկամ էին, մէկտեղ կ'ուտէին և կը խաղային, մի և նոյն փախածին վրայ կը քնանային, մինչ կատուն անհաշտ թշնամի էր բոլոր միւս շուներուն, ըսաւ նաև թէ նա շատ շուներու յաղթած էր կուռելով անոնց հետ:

Ահա խնդիրը լուծելու կերպ մը, զոր վէճին երկու կողմն ալ հաւանեցան ընդունիլ, և պաշտօնական գրութիւն մը պատրաստուեցաւ որ կը հրամայէր թէ Մայթայի կատուի մը տէրը կամ տէրերը պարտին բերել կենդանին այսինչ այսինչ կառավարական անձերու առջև այսինչ ատեն և այսինչ տեղը որ որոշուած են գրութեան մէջ, և երկու կողմն ալ պարտին ընդունիլ ինչ վճիռ որ տրուի:

Սահմանեալ ժամանակ կատուն բերուեցաւ դատաւորներուն առեանին առջև: Պատմուած չէ թէ կատուն ձգուեցաւ պաշտօնական երդումը որպէս զի ըսէր «ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը և մի միայն ճշմարտութիւնը», ոչ ալ տիրոջը առաջարկուեցաւ այս բանին մէջ փոխանորդել կատուն:

Ինչ և իցէ, կատուն յառաջ քալեց հաստատել իր տիրուհւոյն ըսածները, նախ իր կուռասէր յատկութեամբ, վասն զի երբ դատաւորներուն հրամանով ներս բերուեցան քանի մը օտար շուներ, ուռեցուց իր պոչը ամենայն վեհութեամբ, կամարի ձև տուաւ կոնակին նշանաւոր կերպով, և ճակատամարտ մղեց որ մեծապէս դուհացուց հանդիսատեսները, եթէ ոչ հակառակորդ կողմերը, և շուտ մը հալածական ըրաւ սենեակին մէջ գլուխուած շուները: Այնուհետև Մէծըր բերուեցաւ ներս, և ահա կատուն պատերազմաւոր կերպարանքը և վարմունքը խփոյն փոխուեցան ծանօթի մը և բարեկամի մը վարմունքին. անասունները ճանչցան իրար: Հանդիսատեսները այս վճռական ապացոյցին վրայ շատ գոհ եղան և անմիջապէս դադարեցաւ դատաւարութիւնը որ, եթէ յիշեալ կնոջ հնարաղիտութիւնը չըլլար, կրնար երկար ժամանակ տեւել և հակառակութեանց և կռիւներու պատճառ ըլլալ:



ՓՈՂՈՑԻ ԽԱՂԱՐԿՈՒՆԵՐ ԶԱՓՈՆԻ ՄԷՋ

Երբ ճանապարհորդը ճեմեմէս կոչուած կառքով կ'անցի ճափոնական քաղաքի մը փողոցներէն, գրեթէ անշուշտ կը տեսնէ փողոցի դեռահասակ խաղարկուներ, շքեղ հագուած փոքրիկ բաներ, ընդհանրապէս երեքէն մինչև տասներկու տարեկան, և ամէնքն ալ կանոնաւոր կրթութիւն առած: Կը հագնին գլխաւորապէս լայն վարտիք, պայծառ գոյնով կարծ վերարկու (ճափ) և տարօրինակ գըլխարկ: Վարտիքը գիմաղկուն նիւթէ շինուած է, և կապուած է ուրին կոծին վրայ: Կարծ վերարկուն և շապիկը պայծառ գոյն ունին և շատ աչքի կը զարնեն: Գլխարկին առջևի մասը վիշապի մը կիսաբաց բերանին ձևն ունի, և ետևի մասը զարդարուած է շատ մը արագաղի փետուրներով: Գըլխարկին ներքևէն կը կախուի նուրբ կարմիր նիւթէ վարագոյր մը որ անհոգ կերպով ետևը ուսերուն վրայ

կ'իյնայ, և ամբողջ գլխուն վրայ ամփոփուած է կարմիր չուխայի կտորով մը որ կը կապուի ծնօտին ներքևը:

Այս փոքրիկ չարածիները միշտ կը խնդան, բոլորովին զուարթ են, միշտ պատրաստ են անխառն կատակներ ընելու իրարու հետ: Իրենց ամենէն հանճարեղ խեղկատակութիւններէն ետքը իրենք իրենք շատ ծաղրելի դիպքերու մէջ կը դնեն հանդիսատեսները զբօսյնելու նպատակով: Կը ստակաս տեսնելով որ յանկարծ կը կանգնին գլխի վրայ իրենց գարշապարները վեր ոգին մէջ ցցուած, կամ դէպ ի ետև կը ծռին մինչև որ իրենց լիբբ փոքրիկ երեսները հակադարձ դիրքով երևնան ծունկերուն մէջտեղէն: Դարձեալ, կը քայլեն ձեռքերուն վրայ, և ահա անակնկալ կերպով կը փոխեն այս դիրքը և կը թաւալին կը գլորին իրարու վրայ, կը ցատկեն, կ'աքացեն կամ կանգուն կը կենան, և ամէն կերպով կը ջանան անցորդներուն ուշադրութիւնը գրաւել:

Անոնցմէ մէկը շարունակ փոքրիկ թմբուկ մը կը զարնէ և կ'երգէ իր բոլոր սուր ձայնովը, և ամէն ջանք կ'ընէ թմբուկին ձայնին վրայ աղմուկ աւելցնել: Այս բոլոր աշխատութիւնները կ'ընեն յուսալով քանի մը ընդ փոքրներ: Մէկ ընդ մէկ փարայէն պակաս արժէք ունի: Երբ օտարական մը կ'անցնի, փոքրիկ խաղարկուները կը կրկնապատկեն իրենց ջանքերը: Վասն զի աղէկ գիտեն որ անոնք կը կենան, և իրենք առիթ կ'ունենան արծաթ ստակ մը ընդունելու:

Այս փոքրիկները շատ անգամ ճեմեմէսի մը հետևած են երկար հեռաւորութեամբ տեղ, շարունակելով իրենց վերոյիշեալ խաղերը, և երբեմն շատ ձանձրոյթ կու տան: Միշտ յուսալով ուրիշ ստակ մըն ալ առնել, և միշտ պատրաստ ըլլալով աշխատիլ այդ նպատակով, կը ցուցնեն ճափոնական յատկանիշներու այն խորարմատ սկզբունքները, որ են՝ աշխատասիրութիւն, համբերութիւն և յարատևութիւն:

Ամերիկացի Մեխիոնարացի Վերոնիկա Վոլտեր
 Արտօնատէր ձ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
 Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐԵՍՅԱՆ
 Ծինճանճըլար Եղգուշու
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ՊՕՍԱՃԱՆՅ